



Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2010 թվականի ապրիլի 30-ի նիստում
Ինքնուրույն Ռ. Խ. Հակոբյան

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ
ՄՇԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) կողմից իրականացվող բարձրագույն մասնագիտության կրթական ծրագիրը մշակվում է՝ հիմք ունենալով.
 - 1) համապատասխան մասնագիտության կրթական չափորոշիչը,
 - 2) որակավորումների ազգային և ոլորտային շրջանակները,
 - 3) Համալսարանի առաքելությունը և նպատակները,
 - 4) կրթության մակարդակը,
 - 5) շրջանավարտ մասնագետներին ներկայացվող պահանջները,
 - 6) գործատուների պահանջները,
 - 7) մասնագիտության նկատմամբ ժամանակակից գիտագործնական մոտեցումները,
 - 8) որակի ապահովմանն ուղղված պահանջները:
2. Մասնագիտության կրթական ծրագիրն (այսուհետ՝ ՄԿԾ) ունենում է հիմնական կրթական ծրագրին՝ բակալավրիատին կամ մագիստրատուրային համապատասխանող նորմատիվային տևողություն (4 տարի և 2 տարի):
3. ՄԿԾ-ն ներառում է.
 - 1) ՄԿԾ-ի նպատակների և բովանդակության ընդհանուր նկարագիրը,
 - 2) Համալսարանի առաքելության հետ ՄԿԾ-ի համապատասխանության հիմնավորումը,
 - 3) ՄԿԾ-ի իրականացման պայմանները,
 - 4) ուսանողների ընդունելության պահանջները,
 - 5) որակավորման աստիճանը, շնորհվող որակավորումը,
 - 6) ՄԿԾ-ին համապատասխանող ուսումնական պլանը,
 - 7) ուսուցման ձևը (առկա, հեռակա),
 - 8) ուսումնական գործընթացի ժամանակացույցը,
 - 9) ՄԿԾ-ի իրականացման ժամանակի բյուջեի ամփոփ տվյալները,
 - 10) ուսումնական բեռնվածության կիսամյակային բաշխվածությունը,

- 11) ակադեմիական կրեդիտների կիսամյակային և տարեկան բաշխվածությունը,
 - 12) դասընթացների, մոդուլների ցանկը և դրանց հատկացվող կրեդիտները,
 - 13) դասընթացների ընդհանուր բնութագիրը, ակնկալվող կրթական արդյունքները,
 - 14) առարկայական ծրագրերը, թեմատիկ պլանները,
 - 15) ուսուցման և ուսումնառության մեթոդները,
 - 16) ՄԿԾ-ի էլքային արդյունքները, սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների նկարագիրը,
 - 17) գիտելիքների գնահատման ձևը և չափանիշները,
 - 18) ամփոփիչ ատեստավորմանը ներկայացվող պահանջները,
 - 19) շրջանավարտի մասնագիտական գործունեության ոլորտները,
 - 20) կրթության հաջորդ մակարդակում ուսումը շարունակելու հնարավորությունները,
 - 21) այլ տվյալներ:
4. ՄԿԾ-ին համապատասխանող ուսումնական պլանի պարտադիր կառուցամասերն են.
- 1) Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացները,
 - 2) Մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական դասընթացները,
 - 3) Ընդհանուր մասնագիտական դասընթացները,
 - 4) Հատուկ մասնագիտական դասընթացները,
 - 5) Պրակտիկաները,
 - 6) Ավարտական ամփոփիչ ատեստավորումը:
5. ՄԿԾ-ն մշակվում է Համալսարանի համապատասխան թողարկող ամբիոնում:
6. ՄԿԾ-ն քննարկվում է ֆակուլտետի մեթոդախորհրդի նիստում, որին հրավիրվում են թողարկող և հարակից ամբիոնների դասախոսներ, գործատուներ, փորձագետներ, այլ մասնագետներ, շահագրգիռ անձինք:
7. ՄԿԾ-ն ֆակուլտետի մեթոդախորհրդի երաշխավորությամբ քննարկվում է ֆակուլտետի խորհրդում: Կատարված բոլոր հիմնավոր առաջարկությունները հաշվի են առնվում և արտահայտվում ՄԿԾ-ում:
8. ՄԿԾ-ն ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ քննարկվում է Համալսարանի մեթոդախորհրդի ընդլայնված նիստում, որին հրավիրվում են շահագրգիռ անձինք:
9. ՄԿԾ-ն հաստատվում է Համալսարանի ռեկտորի կամ համապատասխան պրոռեկտորի կողմից:
10. Հաստատված ՄԿԾ-ի իրականացման համար պատասխանատու են համապատասխան ամբիոնը, դեկանատը, հարակից ամբիոնները, Համալսարանի ակադեմիական քաղաքականության բաժինը, դասախոսները:
11. ՄԿԾ-ի իրականացման գործընթացը վերահսկում են Համալսարանի ռեկտորը և համապատասխան պրոռեկտորը:
12. ՄԿԾ-ն վերանայվում է առնվազն տարին մեկ անգամ՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին և նոր ուսումնական տարվա սկզբին:
13. Անհրաժեշտության դեպքում ՄԿԾ-ն կարող է վերանայվել տարին երկու անգամ՝ ուսումնական տարվա կիսամյակի ավարտին և նոր կիսամյակի սկզբին:

14. ՄԿԾ-ի մշտադիտարկումը կատարվում է իրականացման լրիվ պարբերաշրջանի արդյունքներով:

15. ՄԿԾ-ի վերանայման համար հիմք է ընդունվում.

- 1) ՄԿԾ-ում ներգրավված ուսանողների և դասախոսական կազմի կարծիքները ծրագրի իրականացման որակի վերաբերյալ,
- 2) ՄԿԾ-ի փաստական ելքային արդյունքների համադրումը նախատեսված ակադեմիական չափանիշների հետ,
- 3) ՄԿԾ-ի արդիականության և աշխատաշուկայում պահանջարկի վերագնահատումը,
- 4) ՄԿԾ-ի իրականացման որակի գնահատումը ծրագրի շրջանավարտների և գործատուների կողմից,
- 5) ՄԿԾ-ի արտաքին փորձաքննության եզրակացությունը,
- 6) ՄԿԾ-ի ռեսուրսային ապահովվածության վերագնահատումը,
- 7) համանման ծրագրեր իրականացնող այլ բուհերի հետ համադրական վերլուծությունները:

16. ՄԿԾ-ի վերանայման հաշվետվությունը համապատասխան եզրակացությամբ (ՄԿԾ-ի շարունակման, դադարեցման կամ բարելավման նպատակահարմարության հիմնավորումը) քննարկվում է ֆակուլտետի խորհրդում, որն էլ համապատասխան առաջարկություն է ներկայացնում Համալսարանի մեթոդխորհրդին:

17. ՄԿԾ-ի հաստատված և բարելավված օրինակները պահվում են ամբիոնում, դեկանատում, Համալսարանի ակադեմիական քաղաքականության բաժնում և մյուս պատասխանատու ստորաբաժանումներում:

Նոր կրթական ծրագրի ստեղծման հայտի ձևաթերթ

1. Ծրագրի ընդհանուր բնութագիրը

Ֆակուլտետ

Ամբիոն

Մասնագիտության (մասնագիտացման) անվանումը և դասիչը

.....

Աշխատանքային խմբի ղեկավարը (պատասխանատուն)

.....

Ուսուցման ձևը (առկա, հեռակա)

Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս)

2. Ընդունելության ծավալները

Ընդունելության ակնկալվող ծավալը 1-ին տարում

Ընդունելության հեռանկարային ծավալը

3. Նոր ծրագրի ներմուծման (գոյություն ունեցող ծրագրի վերանայման)

հիմնավորումը

4. Աշխատաշուկայի վերլուծության արդյունքները

5. Մրցակցային առավելությունները

6. Ծրագրի նպատակները

7. Ծրագրի կառուցվածքը

8. Տարբերիչ առանձնահատկությունները

9. Ուսումնառության էլքային արդյունքները

10. Ուսումնական պրակտիկայի բազան

11. Տվյալ մասնագիտությամբ աշխատատեղերի առկայությունը և աշխատելու հնարավորությունները շրջանավարտների համար

12. Դասախոսական ռեսուրսները

13. Դասախոսների վերապատրաստման կարիքները

14. Ուսումնական տարածքների և լաբորատոր սարքավորումների առկայությունը

15. Համակարգչային ենթակառուցվածքը և ուսուցման տեխնիկական միջոցները

16. Գրադարանային և տեղեկատվական այլ ռեսուրսներ

Ծրագրի աշխատանքային խմբի ղեկավար

Ֆակուլտետի ղեկան

Հայտը քննարկվել և հավանության է արժանացել ֆակուլտետի խորհրդի նիստի կողմից (որոշում թիվ....., ամսաթիվ, ամիս, տարեթիվ):

Կրթական ծրագրի տարեկան մշտադիտարկման (մոնիթորինգի) արդյունքների հիման վրա հաշվետվության ձևաթերթ (Ֆակուլտետի դեկանի)

Ֆակուլտետ

Ամբիոն

Մասնագիտության (մասնագիտացման) անվանումը և դասիչը

Աշխատանքային խմբի ղեկավարը (պատասխանատուն)

Ուսուցման ձևը (առկա, հեռակա)

Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս)

1. Ընդունելությունը և ուսանողական համակազմը

- նշել դիմորդների թիվը և համեմատել այն համապատասխան կողմնորոշիչ (էտալոնային) ցուցանիշների հետ՝ մասնագիտության, բուհական և համակարգային մակարդակներում,
- համեմատել դիմորդների թիվը և որակական կազմը նախորդ տարվա տվյալների հետ, նշել առաջընթացը (կամ հետընթացը),
- համեմատել ուսանողական համակազմը նախորդ տարվա համակազմի հետ, նշել նկատված միտումները,
- ներկայացնել տվյալներ ծրագրի շրջանակներում այլ բուհերում ուսումնառության շրջան անցկացնող ուսանողների վերաբերյալ,
- նշել տվյալներ այլ բուհերից ԳՊՀ տեղափոխված ուսանողների վերաբերյալ,
- նշել տվյալներ ԳՊՀ-ից այլ բուհեր տեղափոխված ուսանողների վերաբերյալ:

2. Ուսանողների կուրսից կուրս առաջընթացը և ուսումնական առաջադիմությունը

- ուսումնական առաջադիմության ցուցանիշների համեմատությունը նախորդ տարվա ցուցանիշների հետ (ըստ նախորդ տարվա մշտադիտարկման արդյունքների),
- կուրսից կուրս անցման ցուցանիշները, փոխադրումները,
- հեռացումները, վերականգնումները, տարկետումները,
- երկրորդ մասնագիտությամբ սովորողների թիվը,
- արտոնություններով ընդունված ուսանողների առաջադիմության խնդիրները (օրինակ՝ անվճար տեղերում սովորող, նպատակային տեղեր զբաղեցնող, զինծառայությունից վերադարձած),
- համեմատել նախորդ տարվա արդյունքների հետ, նշել նկատված միտումները:

3. Վիճակագրական տվյալներ ծրագրի ավարտից հետո շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ

- տվյալներ հաջորդ կրթական աստիճանում ուսումը շարունակող և մասնագիտությամբ աշխատանքի տեղավորված շրջանավարտների մասին,

- զբաղվածության բնութագրերի համեմատությունը նախորդ տարիների արդյունքների հետ, նշել նկատված միտումները,
- տվյալներ գործատուների՝ շրջանավարտներից բավարարվածության վերաբերյալ հարցումների մասին:

4. Կրթական ծրագրի զարգացումն ու փոփոխությունները

- ուսումնական պլանը կրե՞լ է փոփոխություններ և ինչո՞ւ,
- ուսանողների կողմից բարձրացվե՞լ են խնդիրներ՝ կապված ծրագրի ուսումնական պլանի և առանձին դասընթացների հետ,
- արտաքին փորձագետների կողմից բարձրացվե՞լ են խնդիրներ՝ կապված ծրագրի ուսումնական պլանի և առանձին դասընթացների հետ:

5. Եթե հաշվետվությունը վերաբերում է մեկ տարի առաջ ներմուծված նոր կրթական ծրագրին, ապա՝

- նշել նոր ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, մեկնարկի հետ կապված հաջողությունները և բացթողումները, խնդիրները,
- լիցենզավորման ընթացքում առաջադրված պայմաններն ու երաշխավորությունները և դրանց իրականացման ընթացքը, արդյունքները,
- ուսանողների կողմից բարձրացված խնդիրները՝ կապված նոր ծրագրի ներդրման հետ:

6. Ծրագրի ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացները

- մեկնաբանել առկա զարգացումներն ու միտումները (դասավանդման նոր մեթոդներ, մատուցման նորարարական եղանակներ, գիտելիքների գնահատման նոր ձևեր),
- գնահատել, թե ինչպես և ինչ չափով է ծրագիրը հասնում նախատեսված ելքային արդյունքներին և ձևակերպված նպատակներին,
- քննարկել պլանավորված ուսումնական գործընթացից (կանոնակարգերից) շեղման դեպքերը՝
 - ըստ ուսանողների կողմից բարձրացված խնդիրների,
 - ըստ արտաքին փորձագետների կողմից բարձրացված խնդիրների,
- համակազմի կառուցվածքային առանձնահատկությունների ադեցությունը դասավանդման և ուսումնառության արդյունքների (արդյունավետության) վրա:

7. Ուսումնական ռեսուրսները և օժանդակ ծառայությունները

- դասախոսական կազմի համապատասխանությունը իրականացվող ծրագրի խնդիրներին,
- այլ ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների մատչելիությունը, արդիականությունը և համապատասխանությունը իրականացվող ծրագրի պահանջներին,
- այս ուղղությամբ ուսանողների և արտաքին փորձագետների կողմից բարձրացված խնդիրները:

8. Որակի կառավարման գործընթացը

- ուսանողի ուսումնառության իրական գործընթացի համապատասխանությունը նրա հետ կնքված պայմանագրում, ուսանողի ուղեցույցում և ընդունելության գովազդային նյութերում նախատեսված պայմաններին,
- որակի կառավարման գործընթացի քննարկումը՝ ներառելով հետևյալ հարցերը.
 - ուսանողների ներգրավումը որակի ապահովման գործընթացին,
 - արտաքին փորձագիտական եզրակացությունը ծրագրի որակի կառավարման վերաբերյալ,
 - մասնագիտության կրթական ծրագրի տեղեկագիրքը և նկարագրությունը՝ որակի կառավարման համատեքստում,
 - ուսանողների հետադարձ կապի ձևաթերթերը,
 - ծրագրի ինքնագնահատման, վերանայման և լիցենզավորման հաշվետվություններ և երաշխավորություններ, ինքնավերլուծություններ,
- նշված հարցերի վերաբերյալ ուսանողների և արտաքին փորձագետների կողմից բարձրացված խնդիրները:

9. Համագործակցային կապերը և դրանց կառավարումը

- արտաքին գործակցային կապերը, պատվիրատու կազմակերպությունների մասնակցությունը ծրագրի իրականացմանը և բարելավմանը,
- համագործակցությունը այլ ստորաբաժանումների հետ, ծրագրին դրանց մասնակցության ձևերն ու արդյունքները,
- համագործակցային գործողությունների կառավարումը:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մասնագիտության կրթական ծրագրի մշտադիտարկման (մոնիթորինգի) արդյունքների հիման վրա ամբիոնի վարիչների և կրթական ծրագրի ղեկավարի կիսամյակային հաշվետվության ձևաթերթ

Ֆակուլտետ
Ամբիոն
Մասնագիտության (մասնագիտացման) անվանումը և դասիչը
.....
Ուսուցման ձևը (առկա, հեռակա)
Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս)

1. Ուսանողների առաջադիմության առաջընթացը (հետընթացը) կուրսից կուրս

- ուսումնական առաջադիմության ցուցանիշների համեմատությունը նախորդ տարվա ցուցանիշների հետ (ըստ նախորդ տարվա մշտադիտարկման արդյունքների),
- ուսանողների շարժը (կուրսից կուրս անցման ցուցանիշներ, փոխադրումներ, տեղափոխություններ, հեռացումներ, վերականգնումներ),
- երկրորդ մասնագիտությամբ սովորողների թվաքանակը և առաջադիմությունը (առկայության դեպքում),
- անվճար տեղերում սովորող ուսանողների առաջադիմության ցուցանիշները, նրանց միջին որակական գնահատականների համեմատությունը նախորդ տարվա ցուցանիշների հետ (առկա ուսուցման ֆակուլտետներում),
- ներկայացնել առաջադիմության ցուցանիշների նկատված փոփոխությունների պատճառները և առաջարկել ցուցանիշների բարելավման ուղիներ:

2. Կրթական ծրագրի բարեփոխումները և զարգացումները

- ուսումնական պլանը կրե՞լ է փոփոխություններ և ինչո՞ւ,
- ուսանողների կողմից բարձրացվե՞լ են խնդիրներ՝ կապված ծրագրի ուսումնական պլանի և առանձին դասընթացների հետ,
- փորձագետների և այլ շահառուների կողմից բարձրացվե՞լ են խնդիրներ՝ կապված ծրագրի ուսումնական պլանի և առանձին դասընթացների հետ:

3. Եթե ամբիոնում առկա է ներմուծված նոր մասնագիտական կրթական ծրագիր, ապա՝

- նշել նոր ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, մեկնարկի հետ կապված խնդիրներն ու դրանց լուծման ուղիները,
- ուսանողների և այլ շահառուների կողմից բարձրացված խնդիրները՝ կապված նոր ծրագրի ներդրման հետ:

4. Ամբիոնի դասընթացների դրվածքը հարակից կրթական ծրագրերում

5. Ծրագրի ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացները

- մեկնաբանել առկա զարգացումներն ու միտումները (դասավանդման նոր մեթոդներ, մատուցման նորարարական եղանակներ, գիտելիքների գնահատման նոր ձևեր և այլն),
- գնահատել, թե ինչպես և ինչ չափով է ծրագիրը հասնում նախատեսված էլքային արդյունքներին և ձևակերպված նպատակներին,
- ներկայացնել պլանավորված ուսումնական գործընթացից (կանոնակարգերից) շեղման դեպքերը՝
 - ըստ ուսանողների կողմից բարձրացված խնդիրների,
 - ըստ փորձագետների և այլ շահառուների կողմից բարձրացված խնդիրների,
- ուսանողների համակազմի տարիքային առանձնահատկությունների ազդեցությունը դասավանդման արդյունավետության և ուսումնառության արդյունքների վրա:

6. Ուսումնական ռեսուրսները և օժանդակ ծառայությունները

- դասախոսական կազմի համապատասխանությունը իրականացվող մասնագիտական կրթական ծրագրի պահանջներին,
- այլ ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների մատչելիությունը, արդիականությունը և համապատասխանությունը իրականացվող մասնագիտական կրթական ծրագրի առանձնահատկություններին,
- այս ուղղությամբ ուսանողների, արտաքին փորձագետների և այլ շահառուների կողմից բարձրացված խնդիրները:

7. Պրոֆեսորադասախոսական անձնակազմը

- վերապատրաստումներ:

8. Գիտահետազոտական աշխատանքները

- դասախոսների կողմից կատարված,
- ուսանողների կողմից կատարված,
- ուսումնամեթոդական աշխատանքներ:

9. Կրթության որակի ապահովման գործընթացը

- ուսանողի ուսումնառության իրական գործընթացի համապատասխանությունը նրա հետ կնքված պայմանագրում, ուսանողի ուղեցույցում և ընդունելության գովազդային նյութերում նախատեսված պայմաններին,
- կրթության որակի ապահովման գործընթացի ներկայացումը՝ ըստ հետևյալ ուղղությունների.
 - ուսանողների ներգրավումը կրթության որակի ապահովման գործընթացին,
 - արտաքին փորձագիտական եզրակացությունը ծրագրի որակի ապահովման և վերահսկման (կառավարման) վերաբերյալ,
 - մասնագիտության կրթական ծրագրի նկարագրության և տեղեկագիրքի բովանդակությունը՝ որակի ապահովման տեսանկյունից,
- նշված հարցերի վերաբերյալ ուսանողների, արտաքին փորձագետների և այլ շահառուների կողմից բարձրացված խնդիրները:

10. Մասնագիտական կրթական ծրագրի իրականացման գործընթացում ներքին և արտաքին համագործակցությունը

- մասնագիտական կրթական ծրագրի պլանավորման և իրականացման նպատակով համագործակցությունը Համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ, այդ համագործակցության ձևերն ու արդյունքները,
- արտաքին կապերը, համագործակից կազմակերպությունների մասնակցությունը մասնագիտական կրթական ծրագրի իրականացման և բարելավման գործընթացում:

11. Առաջարկություններ կրթական ծրագրի զարգացման վերաբերյալ:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ուսանողների պրակտիկայի ղեկավարի հաշվետվության ձևաթերթ

Ֆակուլտետը _____

Մասնագիտությունը _____

Կուրսը _____

Պրակտիկայի բնույթը և անցկացման ժամանակահատվածը _____

Պրակտիկայի անցկացման վայրը, կազմակերպության անվանումը _____

1. Պրակտիկայի ընթացքում ուսանողների կողմից կատարված աշխատանքի բովանդակությունը

2. Պրակտիկայի ընթացքում ուսանողների կատարած աշխատանքի ընթացքի և արդյունքների վերլուծությունը

2.1 Ի՞նչ գիտելիքներ են ձեռք բերել ուսանողները պրակտիկայի ընթացքում

2.2 Ի՞նչ կարողություններ և հմտություններ են ձեռք բերել ուսանողները պրակտիկայի ավարտին

2.3 Ի՞նչ բացթողումներ և թերություններ են արձանագրվել պրակտիկայի ընթացքում ուսանողների կատարած աշխատանքում

2.4 Ի՞նչ դիտողություններ, առաջարկություններ են եղել կազմակերպության կողմից

2.5 Առաջարկություններ պրակտիկայի ղեկավարի կողմից

Պրակտիկայի

ղեկավար՝

_____ (Անուն, ազգանուն, ստորագրություն)

_____ (ամսաթիվ, ամիս, տարեթիվ)